ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնք,
222 Արմավիրի մարզ, գ.Ֆերիկ, Հեռ. 093-147-222 , ferik.gp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«30»ապրիլի 2025 թվականի N 8-Լ

ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ֆերիկ համայնքի աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) Աղետների ռիսկի կառավարման պլանը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Համայնքի բնակավայրերի վտանգների, խոցելիության և կարողությունների սխեմատիկ պատկերները՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Աղետների ռիսկի կառավարման միջոցառումների օրացույցը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների պլան-ժամանակացույցը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) ազդարարման և տեղեկատվության փոխանակման սխեման՝ համաձայն N 5 հավելվածի.

6) բնակչության տարահանման ժամանակը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) ստանդարտ գործողությունների ընթացակարգերն ըստ բնորոշ աղետների՝ համաձայն N 7 հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետով հավելվածները հաստատվում են երեք տարի ժամկետով:

3. Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման ժամանակ՝ սույն որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետով հաստատվող N 7 հավելվածում ներառված միջոցառումներից որևէ երեքն իրականացնելու դեպքում՝ աղետների ռիսկի կառավարման պլանը համարել գործողության մեջ դրված:

4. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈՒՍՏԱՄ ՀԱՍԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնք,
ՀՀ Արմավիրի մարզ, գ.Ֆերիկ, Հեռ. 093-147-222 , ferik.gp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» ապրիլի 2025 թվականի N 7-Լ

ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Ֆերիկ համայնքի՝

1) աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) ԱՌԿ խորհրդի աշխատակարգը և գործողությունները՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԻՍՏԱՄ ՀԱՍԱՆՅԱՆ

Հավելված N 1
Ֆերիկ համայնքի ղեկավարի
«30» ապրիլի2025 թ-ի N 7-Լ որոշման

ԿԱԶՄ
ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. Համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը՝

1) խորհրդի ղեկավար՝ Ռուստամ Հասանյան /համայնքի ղեկավար/,
2) խորհրդի ղեկավարի տեղակալ-տարհանման և պատսպարման պատասխանատու՝ Անի Գրիգորյան /համայնքի ղեկավարի տեղակալ/,
3) խորհրդի քարտուղար-ազդարարման և իրազեկման պատասխանատու՝ Հրաչյա Խաչատրյան /Առաջատար մասագետ/,

2. ԱՌԿ խորհրդի անդամները՝

1) ոլորտային պատասխանատուներ՝

ա.հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝ Վ. Մկրտչյան /ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի ՄՓՎ Վաղարշապատի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար/ (համաձայնությամբ),

բ. հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ Ա.Դավթյան /ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Վաղարշապատի բաժնի պետ, ոստիկանության գնդապետ /(համաձայնությամբ),

գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ ավագանի Թոռուն Քյալաշյան (համաձայնությամբ),

դ. կապի պատասխանատու Քյարամ Աբասյան (համաձայնությամբ),

ե.բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Հերմինե Ղազարյան /«Խոյ համայնքի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի տնօրեն/ (համաձայնությամբ),

զ.կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ Ամար Մամոյան /համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետ/,

է.էներգետիկ ապահովման պատասխանատու՝ Ռ. Լևոնյան /«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-Ի «Մուսալեռ» մ/ճ տնօրեն/ (համաձայնությամբ),

ը.ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Մամե Մամոյան - /համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ/,

թ. կոմունալ ապահովման և դիակների ճանաչման, հուղարկավորման կազմակերպման ու հաշվառման պատասխանատու՝ Շամոյան Մաջիթ /ավագանի/,

ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ Նարինե Ֆարֆարյան /Ֆերիկի դպրոցի տնօրեն/:

Հավելված N 2
Ֆերիկ համայնքի ղեկավարի
«30» ապրիլի 2025 թ-ի N 7-Լ որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ
ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԱՌԿ խորհրդի աշխատակարգը.

1) Սույն աշխատակարգով սահմանվում են (այսուհետ՝ Աշխատակարգ) Ֆերիկ համայնքի աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը:

2) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են Ֆերիկ համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

3) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ համայնքի ԱՌԿ պլանով սահմանված գործողությունների իրականացումը:

4) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները: Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման ժամանակ պատասխանատու են իրենց ոլորտին վերաբերվող համայնքի ԱՌԿ պլանի բաժինների համար, ինչպես նաև համայնքի ԱՌԿ պլանի նախապատրաստական և արձագանքման մասերում իրենց կարգավորման ոլորտի միջոցառումների համար:

5) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

6) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերն արձանագրվում են քարտուղարի կողմից և ներառվում են համայնքի ԱՌԿ պլանում:

2. ԱՌԿ խորհրդի ԱՌԿ նախապատրաստական գործառույթներն են՝

1) համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը,

2) համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտումը,

3) ԱՌԿ պլանի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը,

4) Աղետների ռիսկի նվազեցման (այսուհետ՝ ԱՌՆ) և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,

5) համայնքում ԱՌՆ միջավայրի և մշակույթի ձևավորումն ու դրանց տարածումը,

6) աղետներին արձագանքման համակարգի ձևավորումն, այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը,

7) ԱՌԿ պլանի միջոցառումների ինտեգրման ապահովումը համայնքի զարգացման ծրագրում,

8) համայնքի վաղ ազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը,

9) «Դիմակայուն համայնք» ստեղծելու նպատակով ԱՌՆ գործընթացներում ուսումնական հաստատությունների և բնակչության ակտիվ ներգրավվածության ապահովումը,

10) բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,

11) նախապատրաստումը համայնքի բնակչությանը կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,

12) հրդեհների կանխարգելման աշխատանքների իրականացնումը՝ բնակչության իրազեկման և ուսուցման միջոցով,

13) վարժանքների կազմակերպումը և անցկացնումը

14) աղետների ռիսկի կառավարման պլանի ճշգրտումը:

3. ԱՌԿ խորհրդի ԱԻ արձագանքման գործառույթներն են՝

1) համայնքի բնակչության ազդարարման իրականացումը,

2) արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը,

3) համայնքի բնակչության տարահանման իրականացումը,

4) կազմակերպում է հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանաց և երեխաների անվտանգ տարահանումը/պատսպարումը,

5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է որոնման, փրկման և հրդեհաշիջման աշխատանքներ,

6) կազմակերպում է բնակչության նյութական և հասարակական արժեքների պահպանությունը, անվտանգության ապահովումը փրկարարական գործողությունների և տարահանման վայրերում,

7) դիակապտության, թալանի, բռնության և այլ հանցավոր երևույթների կանխման ապահովումը,

8) ճանապարհների մաքրման, կամուրջների վերականգնման և նոր տարանցիկ ճանապարհների հիմնման ապահովումը,

9) արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած շինարարական աղբի մաքրման և տեղափոխման ապահովումը,

10) առաջին օգնության իրականացման ապահովումը,

11) սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի հսկողության ապահովումը,

12) բնակչությանը սննդով, ջրով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը,

13) ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը,

14) բնակչության կոմունալ-էներգետիկ ապահովումը,

15) տուժած տարածքների գազամատակարարման և էներգամատակարարման վերականգնման կազմակերպման, անհրաժեշտության դեպքում առանձին հատվածներում դրանց դադարեցման ապահովումը,

16) դիակների հուղարկավորման համար հողհատկացման և հուղարկավորման կազմակերպման ապահովումը,

17) կորած, միայնակ մնացած երեխաների հայտնաբերման, գրանցման և համապատասխան սոցիալական ծառայություններ ուղղորդման ապահովումը,

18) ընտանիքներին երեխաների վերամիավորման կազմակերպման ապահովումը,

19) աղետից հետո ստեղծված իրավիճակի, շենքերի, շինությունների, կամուրջների, թունելների և այլ առանցքային հանգույցների տեխնիկական վիճակի գնահատման կազմակերպման ապահովումը,

20) վնասի և կարիքների վաղ գնահատումը և հայտերի ներկայացումը մարզային կամ հանրապետական հանձնաժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ապրիլի 2025թվականի N 6-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածով, « Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3- րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 41-Ն որոշման 7-րդ կետը.

Որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի ավագանու 2024թվականի դեկտեմբերի 24-ի « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատման մասին » N 41-Ն որոշման մեջ կատարել վերաբաշխում ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ՀԱՍԱՆՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Ֆերիկ
համայնքի ղեկավարի
2025 թվականի ապրիլի 21-ի
թիվ 6-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ

1. 01.01.01 խումբ ենթախմբի 4251 հոդվածն պակասեցնել 400.0 հազար դրամով
2. 01.01.01 խումբ ենթախմբի 4637 հոդվածը ավելացնել 400.0 հազար դրամով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 5-Ա

18ապրիլի 2025թվական

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՄԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով այն, որ բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերի չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջները, բնակելի տունը և շենք-շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերը և չեն առաջացնում սերվիտուտ, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, հիմք ընդունելով այն, որ Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի բնակիչ՝ Ահմադ Ռաշիդի Ալիյանը դիմել է Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի Դոստի փողոցի 7 հասցեում գտնվող իրեն պատկանող /ըստ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 08.03.1991թ. թիվ որոշման/ / 0.2264 հա օրինական և նրա վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի Դոստի փողոցի 7 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Ահմադ Ռաշիդի Ալիյանը՝ /ծնված 00.00.1936թ./, գույքային իրավունքը՝ ճանաչելով նրա սեփականության իրավունք օրինական 0.2264հա հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ՝ բնակելի տուն 134.4ք/մ կառուցված 1987թ, անասնաշենք 47.0ք/մ կառուցված 1987թ., ծածկ 63ք/մ կառուցված 1987թ.,:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿԱ մարզերի միավորված ստորաբաժանմանը Ահմադ Ռաշիդի Ալիյանին /ծնված 00.00.1936թ./, սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4.Բնակելի տանը տրամադրել հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի Դոստի փողոցի թիվ 7 բնակելի տուն:

5.ՈՒժը կորցրած ճանանչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի ղեկավարի 2025թվականի ապրիլի 10-ի թիվ 3-Ա որոշումն և հիմք ընդունել նոր որոշումը

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի Ղեկավար Ռ. Հասանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11պրիլի 2025թվականի N 4-Ա

ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքապետարանի 2025թվականի գնումների պլանը՝ համաձայն հավելվածի:

2.Օրենքով սահմանված կարգով ապահովել գնումների պլանի հրապարակայնությունը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՀԱԱՍԱՆՅԱՆ

Հաստատում եմ՝
Ֆերիկ համայնքի Ղեկավար՝
Ռ.Հասանյան

Պատվիրատու՝ ՀՀ Արմավիրի մարզի Ֆերիկի Համայնքապետարան

Ֆինանսավորման աղբյուրը՝ 2025-թվականի Համայնքային բյուջե

Ծրագիրը՝ Օրենսդիր, գործադիր մարմիններ

Անվանումը համայնքի 2025-թվականի գնումների պլան

բաժին 01 խումբ 01 դաս 01 ծրագիր

(ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման)

Գնման առարկայի		Գնման ձև (ընթացա-կարգը)	Չափման միավորը	Միավորի գինը	Ընդամենը ծախսերը (դրամ	Քանակը
Միջանցիկ կոդը՝ ըստ CPVդասա կարգման	անվանումը					
1	2	3	4	5	6	7

Ծրագիրը՝ Օրենսդիր, գործադիր մարմիններ

բաժին 01 խումբ 01 դաս 01 ծրագիր գրասենյակային ապրանքներ որից՝

հոդված՝ 4261	Բաժին 01, խումբ 1, դաս 1				412600	
1	2	3	4	5	6	7
30197631	տպագրական թուղթ /Ա-4 ֆորմատի 21- 29.7	ՄԱ	հատ	2.00	160000	80
30192121	Գրիչ,/ կարմիր, սև, կապույտ/	ՄԱ	հատ	0.08	32000	400
30192128	գրիչ գելային	ՄԱ	հատ	0.10	10000	100
30141200	հաշվասարք գրասենյակային	ՄԱ	հատ	3.00	24000	8
30197234/1	թղթապանակ,կոշտ կազմով/ռեգիստրատոր,բարակ/	ՄԱ	հատ	0.80	48000	60
3019792	նամակի ծրար Ա5 ձևաչափի	ՄԱ	հատ	0.04	12000	300
30199231	նամակի ծրար Ա4 ձևաչափի	ՄԱ	հատ	0.05	10000	200
30197234/2	թղթապանակ,կոշտ կազմով/ռեգիստրատոր, հաստ/	ՄԱ	հատ	0.90	36000	40
30197331	դակիչ քանոնով մեծ	ՄԱ	հատ	2.50	10000	4
30197234/3	Գրասենյակային գիրք	ՄԱ	հատ	3.0	60000	20
50311250	Քատրիչի լիցքավորում	ՄԱ	հատ	0.50	22100	442

Հոդված 4212	*Բաժին 01, խումբ 1, դաս 1* Էլեկտրաէներգիաի ծախս				950000
9310000	Էլեկտրաէներգիաի ծախս	ՄԱ	կվ	950.00	8181.8
Հոդված 4213	*Բաժին 01, խումբ 1, դաս 1*				**3199.500**
90511100	**Կոմունալ ծառայություններ**	ԳՀ	դրամ	**3199.5**	
հոդված 4214	*Բաժին 01, խումբ 1, դաս 1* կապի ծառայություն որից				**72000**
64220000	ինտեռնետային ծառայություն	ՄԱ	կ/բ	72.0	1
Հոդված 4232	*Բաժին 01, խումբ 1, դաս 1* համակարգչային ծառայություն որից՝				288.000
72210000	համայնքային-կառավարման տեղեկատվական ծրագիր	ՄԱ	դրամ	288.0	10.0
հոդված՝ 4234	*Բաժին 01, խումբ 1, դաս 1* Տեղեկատվական ծառայություն որից՝				24.000
22212120/2	թերթերի բաժանորդագրություն	Մա	հատ	24.0	240

հոդված՝ 4237	*Բաժին 01, խումբ 1, դաս 1 -*					600,000
	Ներկայացուցչական *ծախսեր*	ՄԱ			600,000	1
հոդված 4239	*Բաժին 01, խումբ 1, դաս 1*	Ընդհանուր բնույթի հանրային այլ ծառայություն որից՝				1660.000
37521240/2	խաղալիք/ մեծ/	ՄԱ	հատ	1.0	22500	22.5
39293500	արհեստական զարդեր/տոնածառի/	ՄԱ	հատ	0.7	31500	45
18221500	Ձմեռ պապի համազգեստ	ՄԱ	հատ	5.0	5000	1
34921470	Շչակ Ազդարարման և հեռկառավարման .համակարգ	գի	հատ	560,0	560000	1
72261160	ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ այլ համակարգչային և տնտեսական պարագաներ	ՄԱ	հատ	1	1041000	169.0
հոդված՝4241	*Բաժին 01, խումբ 1, դաս 1*					2000.400
3019000	Մասնագիտական ծառայություններ				2000,4	1
հոդված՝ 4251	*Բաժին 01, խումբ 1, դաս 1*					8002,200
3019000	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում			1	8002,2	1

հոդված՝ 4269	*Բաժին 01, խումբ 1, դաս 1*					550,000
16000000	Հատուկ նպատակային այլ նյութեր	ՄԱ	հատ	1	550,0	1
հոդված՝ 5112	*Բաժին 04, խումբ 2, դաս 4*					47349000
3019000	Շենքերի և շինությունների կառուցում				47349,0	1
հոդված՝ 5134	*Բաժին 06, խումբ 2, դաս 1*					3840.100
71000000	Նախագծահետազոտական ծախսեր				3840,1	1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 3-Ա

10 ապրիլի 2025թվական

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով այն, որ բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերով չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջները, բնակելի տունը և շենք-շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերը և չեն առաջացնում սերվիտուտ, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, հիմք ընդունելով այն, որ Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի բնակիչ՝ Ահմադ Ռաշիդի Այլանը դիմել է Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի Դոստի փողոցի 7 հասցեում գտնվող իրեն պատկանող /ըստ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 08.03.1991թ. թիվ որոշման/ / 0.2264 հա օրինական և նրա վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի Դոստի փողոցի 7 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Ահմադ Ռաշիդի Այլանը /ծնված 00.00.1936թ./, գույքային իրավունքը՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.2264հա հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ՝ բնակելի տուն 134.4ք/մ կառուցված 1987թ, անասնաշենք 47.0ք/մ կառուցված 1987թ., ծածկ 63ք/մ կառուցված 1987թ.,:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿԱ մարզերի միավորված ստորաբաժանմանը Ահմադ Ռաշիդի Այլանին /ծնված 00.00.1936թ./, սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4.Բնակելի տանը տրամադրել հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի Կոմիտասի փողոցի թիվ 6 բնակելի տուն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի Ղեկավար՝ Ռ. Հասանյան